խանեց Յ. Քաջազնունին. «Մեր պետութիւնը, ասաց նա, ի միջի այլոց, կոչւում է ո՛չ թէ հայկական, այլ Հայաստանի Հանրապետութիւն: Այդ ցոյց է տալիս, որ մեր պետութիւնը հայրենիք է նրա մէջ ապրող բոլոր ժողովուրդների համար»:

Հանդէսը տևեց մինչև ուշ գիշեր:

Յաջորդ օր սկսեցին պետական աշխատանքները: Կառավարութիւնը հայրենի հողի վրա անցաւ գործի:

*

Իսկ գործ շատ կար: Վերից վար պէտք էր կառուցանել պետական մեքենան: Երկիրը կատարեալ քաոսի և անիշխանութեան մէջ էր — պէտք էր կարգ ու օրէնք հաստատել: Գաղթականութիւնը անունդ ու բնակարան էր պահանջում — պէտք էր տալ: Պէտք էր կարգադրել պարենաւորման ու դրամական հարցերը: Սահմանների վրա ընդհարումներ էին տեղի ունենում, մահմետական խռովութիւնները երկրում չէին վերացած իսպառ — պէտք էր հաշտութիւնը գործնականացնել արտաքին ու ներքին թշնամու հետ: Մի խօսքով, պէտք էր ոչնչից պետութիւն ստեղծել:

Եւ Թիֆլիսից եկած գործիչները Երևանում գտնուողների հետ համերաշխ և համախորհուրդ՝ լծուեցին աշխատանքի:

Թիֆլիսի և Երևանի Ազգ. Խորհուրդների մի շարք խառն նիստերում վերջնական ձև ստացան Ազգ. Խորհուրդն ու կառավարութիւնը: Որոշուեց, հակառակ ժողովրդականների քէֆի, եռապատկել Ազգ.Խորհրդի անդամների թիւը և հրաւիրել այլազգիների՝ թուրքերի, եզիդիների ու ռուսների ներկայացուցիչներին: Այս ձևով կազմուեց Հայաստանի առաջին օրէնսդրական մարմինը՝ Հայաստանի Խորհուրդ անունով:

Կառավարութեան կազմը պահուեց նոյնը, ինչ որ նշանակուած էր Թիֆլիսում: Քիչ յետոյ հրաւիրուեց միայն մի նոր նախարար արդարադատութեան համար՝ տեղական անկուսակցական գործիչներից մէկը՝ Գ. Պետրոսեանը:

Հաստատուեց Հայաստանի ազգային դրօշակը՝ հորիզոնական կարմիր, կապոյտ ու նարնջի գոյներով: Դրօշակի ձևի և գոյների շուրջ եղան բուռական երկար խորհրդակցութիւններ. ի նկատի առնուեցին հայոց պատմական դրօշակները, լուեց հայկաբան Ստ. Մալխասեանի հիմնաւորուած զեկուցումը հայկական դրօշակի մասին և, ի վերջոյ, որոշուեց ընդունել վերոյիշեալ երեք գոյները՝ պայմանով, որ վերջնական հաստատումը կատարուի Սահմանադիր Ժողովի կողմից, որը պէտք է գումարուէր Հայաստանի երկու հատուածների միացումից յետոյ:

Ի՞նչ բովանդակութիւն կամ խորհուրդ էր դրուում այդ գոյների կամ դրօշակի ամբողջութեան մէջ:

Առանձին պատգամաւորներ իրենց մտքում ունէին, անշուշտ, որոշ բացատրութիւն, ոմանք ճառով էլ արտայայտեցին, բայց Հայ. Խորհուրդը